ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 11.04.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

թիվ ՍՑ-ԷՍ-2018/27

Հայաստանի Հանրապետության գնումների բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաև Խորհուրդ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 16.03.2018թ. թիվ 03/26-3/4635-18 գրությամբ «Լուսալ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված պաշտոնական ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեց հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ ԿԱ քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության 14.03.2018թ. թիվ 1.4/13.1/534-18 գրության հիման վրա, 16.03.2018թ. ՀՀ գնումների բողոքարկման խորհրդում նախաձեռնել է «Լուսալ» ՍՊԸ-ին (այսուհետ՝ նաև Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ՝ նաև Ցուցակ) ներառելու պաշտոնական ընթացակարգ:

ՀՀ ֆինանսների նախարարությունը պատշաճ ծանուցվել է Խորհրդում անցկացվող նիստերի ժամանակացույցի վերաբերյալ, սակայն նախարարության կողմից լիազորված որևէ ներկայացուցիչ չի ներկայացել:

2. **<u>ՀՀ ԿԱ քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>**

ՀՀ ԿԱ քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչությունը 14.03.2018թ. թիվ 1.4/13.1/534-18 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«Տեխնիկական խնդիրների հետևանքով ուշացումով Ձեզ ենք ներկայացնում 28.09.2017թ. հրապարակված ՔԱԳՎ-ԳՀԾՁԲ-10/17 ծածկագրով գնանշման հարցման միջոցով գնում կատարելու ընթացակարգի հաղթող ճանաչված «Լուսալ» ՍՊԸ-ի հայտը մերժելու վերաբերյալ տեղեկատվությունը:

«Լուսալ» ՍՊԸ-ի հայտը մերժվել է համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդված 1-ին կետի 6-րդ ենթակետի ա) մասի համաձայն՝ խախտվել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:»:

ՀՀ ԿԱ քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչությունը պատշաճ ծանուցվել է Խորհրդում անցկացվող նիստերի ժամանակացույցի վերաբերյալ, սակայն նախարարության կողմից լիազորված որևէ ներկայացուցիչ չի ներկայացել:

3. **<u>«Լուսալ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>**

«Լուսալ» ՍՊԸ-ն 10.04.2018թ. գրությամբ Խորհրդին է ներկայացրել գրավոր դիրքորոշում, որով հայտնել է.

««Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

ՀՀ Կառավարության 2017թ. մայիսի 4 թիվ 526-Ն որոշման 45-րդ կետի համաձայն՝ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր տրամադրում է գնումների բողոքարկման խորհրդին: Նույն կարգի 44-րդ կետով սահմանված է՝ մասնակցության իրավունք չունենալու հիմքերի առկայության դեպքում նույն կետով նախատեսված տվյալները չեն ներկայացվում լիազորված մարմին, եթե մասնակիցը կամ կոմիտեն լրացուցիչ տեղեկատվությունը ներկայացրել է մինչև հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստին հաջորդող երրորդ աշխատանքային օրը:

Վերը նշված ժամկետները, ինքնանպատակ չեն սահմանվել, այլ ունեցել են միտում իրավախախտման հայտնաբերումից հետո հնարավորինս կարճ ժամանակահատվածում իրավախախտ կողմի նկատմամբ կիրառել խախտմանը համապատասխան սանկցիա, ինչը տվյալ դեպքում չի պահպանվել Պատվիրատուի կողմից: Վերջինիս իրավախախտման հանգամանքը պարզ է դարձել դեռևս 11.10.2017թ., որից հետո 5 օրյա ժամկետում պարտավոր էր դիմել լիազոր մարմնին բարձրավնելով իրավախախտման խնդիրը, որը չի կատարել, այդպիսով բաց թողնելով նախատեսված 5 օրյա ժամկետը:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 37-րդ հոդվածի առաջին պարբերության՝ «վարչական տույժը կարող է նշանակվել իրավախախտումը կատարվելու օրվանից ոչ ուշ, քան երկու ամսվա ընթացքում, իսկ շարունակվող և տևող իրավախախտման դեպքում՝ այն բացահայտվելու օրվանից երկու ամսվա ընթացքում, բացառությամբ նույն հոդվածով նախատեսված դեպքերի» նշված հոդվածի էությունից հետևում է, որ Օրենսդիրը վարչական տույժը նշանակելու համար սահմանել է հստակ ժամկետներ և այդ ժամկետների բացթողումը վարչական մարմնի կողմից հանգեցնում է վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթի կարճման կամ Քաղաքացիական օրենսգրքով սահմանված հայցային վաղեմության ժամկետները:

Այսինքն, ցանկացած դեպքում օրենսդրական և ենթաօրենսդրական մակարդակում ժամկետները նշելը ինքնանպատակ չէ և նշված ժամկետների բացթողումը հանգեցնում է պետական կամ լիազոր մարմնի կողմից տույժ և/կամ պատասխանատվություն նշանակելու անհնարինություն:

Վերը նշված ամբողջից երևում է, որ Պատվիրատուի կողմից բաց է թողնվել նախատեսված 5 օրյա ժամկետը, ինչի բաց թողումը հանգեցնում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգի կարճմանը:»:

«Լուսալ» ՍՊԸ-ն պատշաճ ծանուցվել է Խորհրդում անցկացվող նիստերի ժամանակացույցի վերաբերյալ, սակայն Ընկերության կողմից լիազորված որևէ ներկայացուցիչ չի ներկայացել:

4. <u>ՍՑ-ԷՍ-2017/27 պաշտոնական ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

Խորհուրդն ուսումնասիրել է ՀՀ ֆինանսների նախարարության 16.03.2018թ. թիվ 03/26-3/4635-18 գրությունը, «Լուսալ» ՍՊԸ-ի կողմից 10.04.2018թ. Խորհրդին ներկայացրած գրավոր դիրքորոշումը, ՔԱԳՎ-ԳՀԾՁԲ-10/17 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերը (այսուհետ՝ նաև Հրավեր), ՔԱԳՎ-ԳՀԾՁԲ-10/17 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 06.10.2017թ. ժամը 11:00 նիստի թիվ 2, 12.10.2017թ. ժամը 11:00 նիստի թիվ 3, և 17.10.2017թ. ժամը 11:00 նիստի թիվ 3.1 արձանագրությունները, Ընկերության կողմից ներկայացված հայտի պատճենը, ՀՀ ԿԱ պետական եկամուտների կողմից 11.10.2018թ. տրված եզրակացությունը.

ՀՀ ԿԱ քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության կարիքների համար՝ համացանցային (www) էջի ձևավորման ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է ՔԱԳՎ-ԳՀԾՁԲ-10/17 ծածկագրով գնանշման հարցում (այսուհետ՝ Ընթացակարգ), որին մասնակցության հայտ է ներկայացրել «Լուսալ» ՍՊԸ-ն:

Ընկերությունը ընթացակարգին մասնակցելու նպատակով ներկայացված հայտի N2 հավելվածով՝ ընթացակարգին մասնակցելու նպատակով հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին համապատասխանելու մասին հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում է ՔԱԳՎ-ԳՀԾՁԲ-10/17 ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին:

Հանձնաժողովը հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին ենթակետը և ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի՝ 40-րդ կետի 5-րդ կետով, 06.10.2017թ. ժամը 11:00-ին կայացած նիստի թիվ 2 արձանագրության 2-րդ կետով, որոշել է 1-ին չափաբաժնով 1-ին տեղը զբաղեցնող մասնակից ճանաչել «Լուսալ» ՍՊԸ-ին:

Նույն արձանագրությամբ Հանձնաժողովը որոշել է ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնել առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների վերաբերյալ:

Հանձնաժողովը 12.10.2017թ. ժամը 11:00-ին նիստի թիվ 3 արձանագրությամբ արձանագրել է, որ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից տրամադրված 11.10.2017թ.՝ եզրակացության համաձայն «Լուսալ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելուն նախորդող երեք հաշվետու տարիների ընթացքում համախառն եկամուտ չի ունեցել, ինչը չի համապատասխանում Հրավերի 2.5 կետի 3-րդ ենթակետի և ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի՝ 63-րդ կետի 1-ին ենթակետի «ա» մասի պահանջներին:

Նույն արձանագրությամբ Հանձնաժողովը որոշել է նիստը կասեցնել և առաջնորդվելով Հրավերի 8.20 կետի 2-րդ ենթակետով ծանուցել «Լուսալ» ՍՊԸ-ին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

Հանձնաժողովը հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի՝ 63-րդ կետի

1-ին ենթակետի «ա» մասը և Հրավերի 2.5 կետի 3-րդ ենթակետը, որոշել է 17.10.2017թ. ժամը 11:00 նիստի թիվ 3.1 արձանագրությամբ մերժել «Լուսալ» ՍՊԸ-ի հայտը:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի՝

- 32-րդ կետի 1-ին ենթակետի «բ» պարբերության համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն՝ հրավերով սահմանված մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշներին իր համապատասխանության մասին,
- 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը, կամ գնային առաջարկը, կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:
- 42-րդ կետի համաձայն՝ եթե նույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է:
- 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարն էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում առաջին տեղն զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար

սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը.

• 44-րդ կետի համաձայն՝ կոմիտեն նույն կարգի 43-րդ կետի 3-ին ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային եղանակով պատվիրատուին տրամադրում է հարցման մասին տեղեկատվություն: Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ կամ չի բավարարում հրավերով «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի պահանջները, և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է: Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրած տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից:

• 63-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ մասնակիցների՝ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետով նախատեսված՝ «Ֆինանսական միջոցներ» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝ հրավերով պահանջվում է, որ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցը, բացառությամբ անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձի, հայտով ներկայացնում է հայտարարություն այն մասին, որ իր կողմից հայտը ներկայացվելուն նախորդող՝

ա. երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը պակաս չէ ներկայացված գնային առաջարկից,

բ. հաշվետու տարվա ընթացքում պարտավորությունների հաշվեկշռային արժեքը չի գերազանցել ակտիվների հաշվեկշռային արժեքը:

ՔԱԳՎ-ԳՀԾՁԲ-10/17 ծածկագրով Ընթացակարգի հրավերի՝

• 2.4 կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ մասնակիցը պետք է ունենա կնքվելիք պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար պահանջվող՝ ֆինանսական միջոցներ:

• 2.5 կետի 3-րդ ենթակետի ա) պարբերության համաձայն՝ «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշը սահմանվում և գնահատվում է հետևյալ կարգով. ՀՀ ռեզիդենտ հանդիսացող մասնակցի, բացառությամբ անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձի, հայտը ներկայացնելուն նախորդող՝

- երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը չպետք է պակաս լինի սույն ընթացակարգի շրջանակում մասնակցի ներկայացրած գնային առաջարկից.

- հաշվետու տարվա ընթացքում պարտավորությունների հաշվեկշռային արժեքը չպետք է գերազանցի ակտիվների հաշվեկշռային արժեքը:

Նույն ենթակետի բ) պարբերության համաձայն՝ ա) պարբերությամբ նախատեսված պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորելու համար մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն, որի իսկությունը հանձնաժողովը գնահատում է նույն հրավերով սահմանված պայմաններով.

• 8.13 կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ հանձնաժողովի քարտուղարը հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այնուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև սույն հրավերի 1-ին մասի 2.5 կետով նախատեսված՝ «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը: Ընդ որում սույն ենթակետում հարցումն ուղարկվում է Ashkhen_Papoyan@taxservice.am էլեկտրոնային փոստի հասցեին սույն հրավերի 7-րդ հավելվածով նախատեսված ձևին համապատասխան՝ էլեկտրոնային նամակի պատճենները միաժամանակ ուղարկելով Lusine_Ghahramanyan@taxservice.am և procurement@minfin.am էլեկտրոնային փոստի հասցեներին.

• 8.15 կետի համաձայն՝ կոմիտեն նույն հրավերի 1-ին մասի 8.13 կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով պատվիրատուին տրամադրում է հարցման մասին սույն հրավերի 8-րդ հավելվածով նախատեսված ձևին համապատասխան տեղեկատվություն: Նույն կետով սահմանված ժամկետում կոմիտեից տեղեկատվության չստացման դեպքում մասնակցի ներկայացրած հայտարարությունները համարվում են իրականությանը համապատասխանող: Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է Օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ կամ չի բավարարում սույն հրավերով «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի պահանջներին և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մեժվում է: Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրված տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից: Նույն կետով նախատեսված որակավորման չափանիշի գնահատման ժամանակ հաշվի է առնվում նույն հրավերի 1-ին մասի 8.20 կետի 2-րդ ենթակետով նախատեսված ընթացակարգը:

Այսպիսով, խորհուրդն արձանագրում է, որ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից 11.10.2017թ. տրված եզրակացության համաձայն՝ «Լուսալ» ՍՊԸ-ի հայտը ներկայացնելուն օրվան նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամուտի հանրագումարը կազմում է 0 (զրո) ՀՀ դրամ:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք)՝ 2-րդ հոդվածի 23-րդ կետի համաձայն՝ գնման գործընթացը գնում կատարելու նպատակով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգերի, իրավունքների և պարտականությունների իրագործմանն ուղղված գործողությունների

ամբողջությունն է, ներառյալ գնումների պլանավորումը, գնման առարկայի բնութագրերի հաստատումը, պայմանագրի կատարումը և կառավարումը:

Օրենքի 6-րդ հոդվածի՝

• 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

• 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը պաշտոնական ընթացակարգ է նախաձեռնում գնումների բողոքարկման խորհրդում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների բողոքարկման խորհուրդը որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

• 3-րդ մասի 4-րդ կետի համաձայն՝ մասնակիցը պետք է բավարարի հրավերով սահմանված որակավորման չափանիշները: Մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող ֆինանսական միջոցներ:

Նկատի ունենալով, որ «Լուսալ» ՍՊԸ-ն ընթացակարգին մասնակցելու նպատակով ներկայացված հայտի N2 հավելվածով՝ հայտարարել և հավաստել է, որ բավարարում է ՔԱԳՎ-ԳՀԾՁԲ-10/17 ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին, սակայն Ընկերության երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը կազմել է 0 (զրո) ՀՀ դրամ, Խորհուրդը գտնում է, որ Ընկերությունը խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, ինչը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի՝ 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով, 2-րդ մասով, 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 16.03.2018թ. թիվ 03/26-3/4635-18 գրությամբ «Լուսալ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով Խորհրդում նախաձեռնված պաշտոնական ընթացակարգը բավարարել:

2. «Լուսալ» ՍՊԸ-ին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀՀ գնումների բողոքարկման
խորհրդի անդամ՝ **ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ**